Հավելված 2
2023 թ.հունվարի 23-ին
կնքված N 1032-11004/23-Վ պայմանագրի

# Դրամաշնորհային հաշվետվություն տարեկան

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Ծրագրի անվանում | Տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ Լոռու մարզում |
| Դրամաշնորհի N | 1032-11004/23-Վ |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամ |
| Ծրագրի իրականացման ժամանակահատված | 01.01.2023թ-31.12.2023թ |
| Հաշվետու ժամանակահատված | 01.01.2023թ-31.12.2023թ |
| Ներկայացման օր | 10.01.2024թ |
| Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն) | Մանուշակ Օհանյան - Տնօրեն |

Բովանդակային հաշվետվություն

2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

| |
|---|
| Հաշվետու ժամանակահատվածում Վանաձորի տարեցների տունը իրականացրել է 65 տարին լրացած, չաշխատող, օրենսդրությամբ սահմանված կարգով խնամող չունեցող, կամ, բացառիկ դեպքերում՝ 18 տարին լրացած հաշմանդամություն ունեցող, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված խնամքի և հոգածության կարիք ունեցող անձանց կացարանով ապահովման, շուրջօրյա խնամքի և այլ սոցիալական ծառայություններ, որի շրջանակներում հիմնադրամի կողմից իրականացվել են հետևյալ գործողությունները՝ <br> Տարեցների տան խնամքի տակ գտնվող շահառուներին մշտական և ժամանակավոր օթևանի տրամադրում, նրանց համար կյանքի լիարժեք, բարեկեցիկ, ընտանեկանին առավել մոտ պայմանների ստեղծում, մասնավորապես՝ խնամառուների կենցաղային սպասարկում(օրական 3-անգամյա սննդի, ըստ անհրաժեշտության հագուստի, անկողնային և առաջնային այլ պարագաների տրամադրում), խնամքի, բժշկա-սանիտարական հոգածության և սպասարկման ապահովում, սոցիալ-հոգեբանական վերականգնման աշխատանքների իրականացում, առաջնային բժշկական օգնության տրամադրում, անհրաժեշտության դեպքում՝ հոսպիտալացման կազմակերպում, առօրյան հետաքրքիր դարձնելու համար բազմատեսակ մշակութային միջոցառումների կազմակերպում: |

2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների,նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

| | Իրականացված գործողություններ | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Գործառույթների նկարագիր(1) | Ակնկալվող արդյունքները(2) | Գնահատման չափանիշները և հիմնավորող փաստաթղթեր(3) | Փաստացի մատուցած ծառայություններ (4) | Մեկնաբանություն (5) |
| 1 | Շահառուների ընդունելություն և կացարանով ապահովում | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1.1 | Ընդունման վերաբերյալ համապատասխան փաստաթղթերի կազմում<br>• հաստատությունում խնամառուի փաստացի հաշվառման իրականացում,<br>• կենսաթոշակի հետ կապված հարցերի կարգավորում | Շահառուների պատշաճ հաշվառում | Ընդունելությունը իրականացվել է ՀՀ կառավարության 2022թ.նոյեմբերի 10-ի 1744-Ն որոշմամբ հաստատված պահանջներին համապատասխան՝ ՄՍԾ տարածքային կենտրոնների ուղեգրերի հիման վրա: Կատարվել է գրանցում «Սոցիալական պաշտպանության ծրագրերում ընդգրկված և խնամք ստացող տարեցների ու հաշմանդամների հաշվառման տեղեկատվական համակարգ»-ում:<br>Կազմվել են՝<br>➢ Խնամառուի ընդունման հրաման<br>➢ Պայմանագիր<br>➢ Անհատական քարտ | 8 շահառու | |
| 1.2 | Կացարանով՝ անհրաժեշտ կահույքով, անկողնանային պարագաներով և կենսապահովման համար անհրաժեշտ միջոցներով ապահովում | Շահառուները ապահովվել են ընտանեկանին առավել մոտ սոցիալ-կենցաղային պայմաններով | | Հաշվետու ժամանակահատվածում բնակվել է 61 մարդ/19855 մարդ օր | |
| 2 | **Կարիքի գնահատում և անհատական սոցիալական ծրագրի կազմում** | | | | |
| 2.1 | Շահառուի ինքնասպասարկման կարողությունների և սոցիալական կարիքի գնահատում և դասակարգում | Շահառուներին մատուցվել են ծառայություններ իրենց կարիքին համապատասխան | Գնահատումը և դասակարգումը կատարվել է համաձայն աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2017թ. մարտի 14-ի 44-Ա/1 հրամանի մեթոդաբանության:<br>Կազմվել են՝<br>➢ Սոցիալական քարտ (ծրագիր)<br>➢ Շահառուի կարիքի և ինքնա-սպասարկման կարողությունների գնահատման թերթիկ | 8 շահառու | |
| 2.2 | Սոցիալական ծրագրի կազմում՝ ըստ տվյալ խմբի համար նախատեսված ծառայությունների | | | | |
| 2.3 | Շահառուների սոցիալական կարիքների վերագնահատում վեց ամիսը մեկ անգամ | | | 55 շահառու | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 3 | **Սոցիալ հոգեբանական օգնության կազմակերպում** | | | | | |
| 3.1 | Շահառուների ինտեգրում և հարմարեցում նոր միջավայրին | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց սոցիալ-հոգեբանական առողջության վերականգնում և պահպանում | | Գրանցամատյան | 8 շահառու | |
| 3.2 | Հարաբերությունների կարգավորում, ընդհանուր կարիքների և խնդիրների վերհանում և աջակցում դրանց լուծմանը, կոնֆլիկտների լուծմանը | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց սոցիալ-հոգեբանական առողջության վերականգնում և պահպանում | | | 61 շահառու | |
| 3.3 | Սոցիալ-հոգեբանական օգնության և խորհրդատվության տրամադրում | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց սոցիալ-հոգեբանական առողջության վերականգնում և պահպանում | | Գրանցամատյան | 839անգամ | |
| 3.4 | Կարիքների գնահատման հիման վրա շահառուների ընտանիքների հետ կապերի ամրապնդում և սոցիալ հոգեբանական աշխատանքի արդյունքում շահառուի վերադարձ ընտանիք | շահառուի վերադարձ ընտանիք | | | 1 շահառու | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3.5 | Կարիքների գնահատման հիման վրա առկայության դեպքում շահառուների հարազատների, ընկերների փոխայցելությունների և հանդիպումների կազմակերպում | Հարազատների և շրջապատի հետ կապի ամրապնդում | Գրանցամատյան | 274 անգամ | |
| **4. Բժշկական օգնության և սպասարկման կազմակերպում** | | | | | |
| 4.1 | Ընդունելության ժամանակ շահառուի բուժզննություն, առողջական վիճակի գնահատում, բժշկական քարտի բացում | Շահառուների առողջական վիճակի վերականգնում և պահպանում | Բժշկական քարտ | 8 շահառու | |
| 4.2 | Առաջնային բժշկական օգնության և սպասարկման տրամադրում<br>• Բժշկի համայց՝ առնվազն շաբաթը մեկ անգամ և ըստ անհրաժեշտության, խնդիրների վերհանում և բուժօգնության կազմակերպում<br>• Բուժզննության իրականացում՝ երեք ամիսը մեկ անգամ<br>• Բուժքրոջ համայց՝ ամենօրյա և ըստ անհրաժեշտության, անհրաժեշտության դեպքում ճնշման չափում և ջերմաչափում<br>• Առաջին բուժօգնության տրամադրում, ներկայացում բժշկին, բժշկի նշանակումների կատարում | Շահառուների առողջական վիճակի վերականգնում և պահպանում | Բժշկական քարտ<br>Գրանցամատյան | 61 շահառու<br>Միջին օրական 37 շահառու | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 4.3 | Մասնագիտական բժշկական օգնության կարիքի դեպքում պոլիկլինիկական, հիվանդանոցային բժշկական օգնության ստացման և հիվանդանոցային (ստացիոնար) բուժօգնություն իրականացնող կազմակերպություն ուղեգրման կազմակերպում | Շահառուների առողջական վիճակի վերականգնում և պահպանում | Գրանցամատյան | Պոլիկլինիկա – 142 անգամ<br>Հիվանդանոց- 53 անգամ<br>Ստացիոնար- 13 շահառու/75 օր | |
| 4.4 | • Անհրաժեշտության դեպքում՝ բժշկա-սոցիալական փորձաքննության և վերափորձաքննության կազմակերպում<br>• Աջակցող միջոցներով ապահովման գործընթացի կազմակերպում | Շահառուների առողջական վիճակի վերականգնում և պահպանում | Տեղեկանք բժշկա-սոցիալական փորձաքննության<br>Վերականգնողական անհատական ծրագիր | | |
| 5 | **Սննդի տրամադրում** | | | | |
| 5.1 | Սննդի տրամադրում՝<br>օրական առնվազն երեք անգամ | | Համաձայն ՀՀ Կառավարության 2007թ. մայիսի 31-ի «Ծերերի և հաշմանդամների սոցիալական սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» N730 –Ն որոշման<br>Հիմքը՝ Մենյու- պահանջագրեր | 19855 մարդ/օր | |
| 6 | **Խնամքի իրականացում** | | | | |
| 6.1 | Ըստ անհրաժեշտության շահառուներին տրամադրվել է հագուստ, սպիտակեղեն, կոշկեղեն | | Գրանցամատյան,<br>բաշխման ցուցակներ | 61 շահառու | |
| 6.2 | Ըստ անհրաժեշտության անկողնային և անձնական հիգիենիկ պարագաներով ապահովում | | Գրանցամատյան<br>բաշխման ցուցակներ | 61 շահառու | |
| 6.3 | Սանիտարահիգիենիկ պայմանների ապահովում և կազմակերպում | | Գրանցամատյան<br>բաշխման ցուցակներ | 61 շահառու | |

| 7 | **Ազատ ժամանցի մշակութային միջոցառումների կազմակերպում** | | | | |
|---|---|---|---|---|---|
| 7.1 | Մշակութային միջոցառումների կազմակերպում հաստատության ներսում | Շահառուների զբաղվածության ապահովում | Միջոցառումների գրանցամատյան, լուսանկարներ, նյութեր տարեցների տան ֆեյսբուքյան էջում | 26 միջոցառում | |
| 7.2 | Ըստ շահառուների ֆիզիկական հնարավորությունների մշակությային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում հաստատությունից դուրս՝ ըստ շահառուների ֆիզիկական հնարավորությունների | | Միջոցառումների գրանցամատյան, լուսանկարներ, նյութեր տարեցների տան ֆեյսբուքյան էջում | 11 միջոցառում | |

**Ծրագրի արդյունքում ապահովվել է միայնակ, սոցիալապես անապահով, հիմնադրամի խնամքի տակ գտնվող 55 տարեցների արժանապատիվ ծերությունը, որի արդյունքում՝ նրանք իրենց տարիները անց են կացնում արժանապատվորեն՝ կենցաղային բարեկեցիկ և ապահով պայմաններում:**

**2.3Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիապրոդուկտներ և այլն)**

Հաստատությունն ունի ֆեյսբուքյան էջ՝ **Վանաձորի տարեցների տուն/Vanadzor Old Age Home**, որտեղ լուսաբանվում է կազմակերպության գործունեությունը, իրականացվող միջոցառումները և տարեցների առօրյան:

**2.4Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:**

Ծրագրի իրականացման համար լուրջ խնդիրներ կամ խոչընդոտներ չեն եղել:

**2.5Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Ծրագիրը շարունակական է: Հաջորդ ժամանակատավածում ևս իրականացվելու է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված խնամքի և հոգածության կարիք ունեցող տարեց անձանց կացարանով ապահովման, շուրջօրյա խնամքի և այլ սոցիալական

| |
|---|
| ծառայությունների մատուցումը այն է՝<br>տարեցներին մշտական և ժամանակավոր օթևանի տրամադրում, նրանց համար կյանքի լիարժեք, բարեկեցիկ, ընտանեկանին առավել մոտ պայմանների ստեղծմանը, մասնավորապես՝ խնամառուների կենցաղային սպասարկում(օրական 3-անգամյա սննդի, ըստ անհրաժեշտության՝ հագուստի, անկողնային և առաջնային այլ պարագաների տրամադրում), խնամքի, բժշկա-սանիտարական հոգածության և սպասարկման ապահովում, սոցիալ-հոգեբանական վերականգնման աշխատանքների իրականացում, առաջնային բժշկական օգնության տրամադրում, անհրաժեշտության դեպքում՝ հոսպիտալացման կազմակերպում, առօրյան հետաքրքիր դարձնելու համար բազմատեսակ մշակութային միջոցառումների կազմակերպում:<br>Ծրագիրն իրականացվելու է մինչև 55 խնամվողի համար: |

2.6 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

| |
|---|
| Աշխատանքային պլանից դուրս իրականացված գործողություններ չեն կատարվել: |

«Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամ

Տնօրեն ________ Մանուշակ Օհանյան

«10» հունվարի 2024թ

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի շուրջօրյա խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ 2023 թվական

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը | |
|---|---|---|---|
| 1. | Հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 53 | 55 |
| 1.1 | Այդ թվում՝ կին | 24 | 24 |
| 1.2 | Այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձ՝ 18-65 տարեկան | 6 | 5 |
| 1.2.1 | Այդ թվում՝ կին | 1 | 1 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 6 | 5 |
| 1.3 | Այդ թվում՝ 65-ից բարձր տարիքի անձինք | 47 | 50 |
| 1.4 | Անկողնային խնամքի կարիք ունեցող շահառուներ | 3 | 2 |
| 2. | Հաշվետու ժամանակահատվածում ընդունվել է | 8 | |
| 3. | Հաշվետու ժամանակահատվածում դուրս է գրվել, այդ թվում՝ | 6 | |
| 3.1 | Վերադարձել է ընտանիք | 1 | |
| 3.2 | Ընդունվել է այլ հաստատություն | 2 | |
| 3.3 | Մահացել է | 3 | |
| 4. | Առաջին օգնության և սպասարկման տրամադրում, այդ թվում՝ դեղերի տրամադրում | 419 | |
| 5. | Վերականգնողական ծառայություններ(նշել տեսակը և ծառայություններ ստացողների թիվը) | - | |
| 6. | Ուղեգրվել է ստացիոնար բուժհաստատություն | 13 | |
| 7. | Կարիքի գնահատում | 116 | |
| 8. | Այցելություններ(շահառուի և նրա մոտ), հանդիպումներ | 246 | |
| 9. | Աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում(նշել տեսակները և մասնակիցների թիվը) | - | |
| 10. | Մշակութային միջոցառումների կազմակերպում, այդ թվում՝ | 35 | |
| 10.1 | Հաստատությունից դուրս | 10 | |
| 11. | Ուղեկցման ծառայություններ | 250 | |
| 12. | Այլ ծառայություն(նշել) | - | |

«Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամ

Տնօրեն՝ ________ Մանուշակ Օհանյան «10» հունվարի 2024թ